

*Համարը* ԹԻՎ 20

*Տիպը* Պաշտոնական

տեղեկատվություն

*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2006.07.19/39(494)

*Ընդունող մարմինը* Արդարադատության

նախարարություն

*Ստորագրող մարմինը* Արդարադատության

նախարարության իրավական

ակտերի փորձաքննության

վարչության պետ

*Վավերացնող մարմինը*

*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 29.07.2006

*Տեսակը* Մայր

*Կարգավիճակը* Գործում է

*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունման ամսաթիվը* 12.07.2006

*Ստորագրման ամսաթիվը* 12.07.2006

*Վավերացման ամսաթիվը*

*Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ ՀՕ-114-Ն ՀՀ ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

## ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

12 հուլիսի 2006 թվականի

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ ՀՕ-114-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ և 91-րդ հոդվածի 5-րդ մասերի պահանջներից ելնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հայտնում է, որ՝

Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի 2006 թվականի հունիսի 28-ի թիվ 34 (489) համարում հրապարակված՝ 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-114-Ն Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ հուլիսի 8-ից, քանի որ, այն ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող նորմեր է պարունակում:

Իրավական ակտերի  
փորձաքննության վարչության պետ՝

Կ. Խտրյան